



Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝	Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Նախագահությամբ դատավոր՝	Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Քարտուղարությամբ՝	
Մասնակցությամբ՝	
Երրորդ անձի ներկայացուցիչներ՝	Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ Շ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

2013թվականի ապրիլի 22-ին, Գյումրիում, դռնբաց դատական նիստում, քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի Հռիփսիկ Մարտիրոսի Մկրտչյանի /հասցե՝ ք. Գյումրի, 207/336 տնակ, անձնագիր՝ ԱԿ0354871, տրված 31.07.2009թ. 016-ի կողմից/ ընդդեմ Լիդա Փանոսի Մկրտչյանի /հասցե՝ ք. Գյումրի, Մուշ-2 թաղ. 39 շենք, բն. 9, անձնագիր՝ ԱՄ0908185, տրված 18.10.2012թ. 016-ի կողմից/, Գագիկ Համբարձումի Մկրտչյանի /հասցե՝ ք. Գյումրի, Մուշ-2 թաղ. 39 շենք, բն. 9, անձնագիր՝ ԱՄ0908182, տրված 18.10.2012թ. 016-ի կողմից/ երրորդ անձ՝ Շիրակի մարզպետարան, ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ բնակարանի ապահովման պատասխանատվությամբ բաժնի հատկացման պահանջի մասին:

Հայցվոր Հռիփսիկ Մարտիրոսի Մկրտչյանը դիմել է դատարան ընդդեմ Լիդա Մկրտչյանի, Գագիկ Մկրտչյանի, երրորդ անձ՝ Շիրակի մարզպետարան, ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ բնակարանի ապահովման պատասխանատվությամբ բաժնի հատկացման պահանջի մասին:

Սակայն մինչ դատաքննությունը հայցվոր Հռիփսիկ Մկրտչյանը դատարանին ուղղված դիմումով հրաժարվել է հայցից և խնդրել է քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել հետեւյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝ հայցվորը հրաժարվել է հայցից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 1-ի կետի՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է վճիռ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով, 110, 130-132, 140 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ո Ե Ց

Քաղաքացիական գործն ըստ հայցի Հռիփսիկ Մարտիրոսի Մկրտչյանի ընդդեմ Լիդա Փանոսի Մկրտչյանի, Գագիկ Համբարձումի Մկրտչյանի, երրորդ անձ՝ Շիրակի մարզպետարան, ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ բնակարանի ապահովման պատասխանատվությամբ բաժնի հատկացման պահանջի մասին, կարճել հայցվոր կողմի հայցից հրաժարվելու հիմքով:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան
հրապարակման պահից մեկ ամսյա ժամկետում

ԴԱՏԱՎՈՐ՝

Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ

ԴԱՏԱՎՈՐ՝

Հ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ